ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/37594-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-221-11.07.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-221-11.07.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել 338.2-րդ հոդվածով և քրեական պատասխանատվություն սահմանել «նոտարին ակնհայտ կեղծ տեղեկատվություն կամ ակնհայտ կեղծ փաստաթուղթ ներկայացնելու» համար:

Ներկայացված նախագիծը, ըստ էության, քրեաիրավական գնահատականի է արժանացնում մի արարք, որն արդեն իսկ օրենսգրքով քրեորեն պատժելի է համարվում: Մասնավորապես, օրենսգրքի 325-րդ հոդվածը inter alia քրեական պատասխանատվություն է սահմանում նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու համար: Համեմատական վերլուծության ենթարկելով նախագծով ներկայացված և օրենսգրքի նշված հոդվածի տարրերը՝ տեսնում ենք, որ դրանք օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով, ինչպես նաև սուբյեկտով ամբողջովին նույնանում են: Նոտարին կեղծ փաստաթուղթ ներկայացնելը, փաստացի, ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու ձևերից մեկն է, որոնց համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ նա գործել է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ տեղյակ է եղել և գիտակցել է, որ իր կողմից օգտագործվող փաստաթուղթը կեղծ է, իսկ հանցագործության կատարման նպատակը, որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, օրենսգրքի 325-րդ հոդվածով սահմանված քրեորեն պատժելի արարքում նույնպես սահմանված չէ, ինչը նշանակում է, որ նշված արարքը կատարելու դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության՝ անկախ արարքի կատարման նպատակից:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ իրավապահ մարմինների աշխատողների կողմից արդեն իսկ նման մոտեցում է ցուցաբերվում, և նոտարին կեղծ փաստաթուղթ տրամադրելու արարքը պրակտիկայում որակվում է օրենսգրքի 325-րդ հոդվածով: Նոտարին ակնհայտ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու դեպքերով առկա է նաև ձևավորված կայուն

դատական պրակտիկա, որոնք, ի թիվս այլ դատավճիռների, արտահայտված են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 որոշմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՇԴ3/0036/01/17 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հուլիսի 4-ի թիվ ԼԴ/0027/01/19 քրեական գործերով կայացված դատավճիռներով:

Անդրադառնալով նախագծով ներկայացված 338.2-րդ հոդվածով և օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտներին, պետք է նշել, որ օրենսգրքի 325-րդ հոդվածն ամրագրված է կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող գլխում, և դրա անմիջական օբյեկտը, քննարկվող արարքի շրջանակներում, փաստաթղթերի հետ վարվելու սահմանված կարգն ու օրինական փաստաթղթաշրջանառության պահպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Նախագծով ներկայացված 338.2-րդ հոդվածը նախատեսվում է ընդգրկել արդարադատության դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող գլխում, իսկ դրա անմիջական օբյեկտը, դատելով նախագծով ներկայացված հիմնավորումներից, նոտարների պատշաճ գործունեությունն ապահովելուն ուղղված հասարակական հարաբերություններն են: Մինչդեռ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ նոտարների իրավական կարգավիճակը և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում են բավարար իրավական երաշխիքներ նոտարների գործունեության համար, ինչպես նաև նոտարների համար սահմանում են պարտականություն՝ բոլոր դեպքերում ստուգել իրենց ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի իսկությունը և դրանց՝ օրենքին համապատասխանությունը:

Ինչ վերաբերում է նոտարին ակնհայտ կեղծ տեղեկատվություն փոխանցելուն, ապա պետք է նշել, որ այս դեպքում նույնպես նոտարի վրա դրված է իրավաբանական փաստերի վերաբերյալ իրեն ներկայացված տեղեկատվության ստուգման պարտականությունը: Նշված պարտականության կատարումը կարող է արտահայտվել փաստաթղթեր ներկայացնելու պահանջով: Այդ փաստաթղթերի շրջանակից դուրս նոտարին հայտնած տեղեկատվությունը ոչ միշտ կարող է էական նշանակություն ունենալ նրա գործառույթների իրականացման համար: Հետևաբար, այդ տեղեկատվությունը կեղծված ներկայացվելու դեպքում դա չի կարող համարվել բավարար հանրային վտանգավորություն ներկայացնող հանգամանք՝ այն որպես հանցագործություն օրենսգրքում սահմանելու համար:

Ելնելով շարադրվածից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ակնհայտ կեղծ փաստաթղթի օգտագործումը, որպես կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն, արդեն իսկ նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծով առաջարկված՝ նոտարին կեղծ տեղեկատվություն և փաստաթուղթ ներկայացնելու արարքը նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2019 թվականի N 1094 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*ԽՎ-221-11.07.2019-ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 7
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-221-11.07.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի օրենսգիրքը լրացնել նոր 338.2-րդ հոդվածով.

«*Հոդված 338.2. Նոտարին կեղծ տեղեկատվություն կամ փաստաթուղթ ներկայացնելը*

1. Նոտարին ակնհայտ կեղծ տեղեկատվություն կամ ակնհայտ կեղծ փաստաթուղթ ներկայացնելը՝ անկախ արարքի նպատակից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն նախագիծը մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել՝ պայմանավորված նոտարին ակնհայտ կեղծ տեղեկատվություն կամ փաստաթղթեր ներկայացնելը քրեականացնելու անհրաժեշտությամբ, քանի որ այդ արարքի ու դրա հետեւանքների հանրային վտանգավորությունը շատ բարձր է:

Հարկ է նաեւ նշել, որ այս օրենքի ընդունման անհրաժեշտությունն առաջացել է բավականին վաղուց եւ այդ մասին արդեն տեւական ժամանակ բարձրաձայնում են նաեւ նոտարական համայնքի ներկայացուցիչները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոտարական գործողությունները քաղաքացիական շրջանառության մասնակիցների համար առաջացնում են նշանակալից հետեւանքներ, իսկ այդ գործողություններն իրականացնելիս նոտարները հիմք են ընդունում իրենց տրամադրված տեղեկատվությունն ու փաստաթղթերը, հետեւաբար չափազանց կարեւոր է, որպեսզի օրենսդրությամբ սահմանվի նոտարին կեղծված տեղեկատվություն կամ փաստաթուղթ ներկայացնելու քրեաիրավական հետեւանք:

Ներկայացված նախագծով՝

- Առաջարկվում է սահմանել այլընտրանքային սանկցիա (տուգանք, կալանք կամ ազատազրկում) նոտարին ակնհայտ կեղծ տեղեկատվություն կամ փաստաթուղթ ներկայացնելու համար:

- Ընդ որում, «ակնհայտ կեղծ» բառակապակցությունն այստեղ նշանակում է, որ արարքը սուբյեկտիվ կողմից դրսեւորվում է դիտավորությամբ, քանի որ տեղեկատվությունը/փաստաթուղթը ներկայացնողի համար ակնհայտ է դրա կեղծ լինելու հանգամանքը:

- Մեղքի այլ տեսակների դեպքում արարքը ենթակա չէ որակման այս հոդվածով:

- Միաժամանակ, առաջարկվում է չսահմանել հատուկ նպատակ, քանի որ նոտարին ակնհայտ կեղծ տեղեկատվության/փաստաթղթի ներկայացումն ինքնին հանրային բարձր վտանգավորության արարք է:

- Որպես արարքը որակյալ դարձնող (ծանրացուցիչ) հանգամանք՝ առաջարկվում է սահմանել ծանր հետեւանքներ առաջացնելը: